**Արձանագրություն N 3**
**«ՀԱԿԲՀ-ԳՀԾՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

**ք.Երևան** «19» «հունիսի» 2018թ.

ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Հակոբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հովհաննիսյանը
Ա. Էկտիբարյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Գևորգյանը

**I. ՀԱԿԲՀ-ԳՀԾՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գնահատման մասին**

(Մ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- 14.06.2018թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱՆԻՏՈՒՐ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման մասին եզրակացությունը սահմանված ժամկետներում տրամադրվել է:
- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 19.06.2018թ. գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
- Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել):
- Հանձնաժողովի կողմից լրացված գնահատման թերթիկներում Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը Մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ գնահատվել են բավարար:

**2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**

(Մ. Հակոբյան)

Հանձնաժողովը որոշեց.

- Ընտրված մասնակից ճանաչել 1-ից 4-րդ չափաբաժիններով «ԱՆԻՏՈՒՐ» ՍՊԸ -ին.

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը
- ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ________________ Մ. Հակոբյան

Անդամներ՝ ________________ Մ. Հովհաննիսյան

________________ Ա. Էկտիբարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Ն. Գևորգյան